



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Ս. ՅՈՎԱԿԱՆՆՈՒ ԿԱՐՎՊԵՏԻ ԵՒ ՅՈՒԼԻԿՈՒՏԻ Ս. ԿԱՐՎՊԵՏ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻ ԱՍԼՈՒԱՆԿՈՉՈՒԹԵՎԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՑՔԻՆ

ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԵԶ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ, ՀԵՉՈՒԹԵԱՄԲ ԵՒ ճՃՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԻՆՔ

ՊԱՏԳԱՎԱՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ

Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով Կիրակի, Յունուար 16, 2011ին, Եպիսկոպոսական սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. S. Մուշեղ Արքեպա. Մարտիրոսեան: Ս. Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւ Արծ. S. Վիգեն Ալ. Զինյ. Վասիլեան եւ սարկաւագներն ու դպիրները: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ ուրարի տուչութիւն Ս. Խորանի ծառայող դպիրներէն՝ Գեղրգ Թահմիզեանին:

Իր պատգամ քարոզին մէջ Առաջնորդ Սրբազան Յայրը գնահատեց Գեղրգը իր անսակարկ եւ Աստուածահանոյ ծառայութեան համար: Ան շեշտեց որ 2011 տարուան առաջին տուչութիւնն էր, նկատի առնելով որ Մեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ա.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոս, 2011 տարին հռչակած էր Մանուկներու Տարի: Ան թելադրեց որ ծնողներ իրենց զաւակներու քայլերը Եկեղեցի առաջնորդէն:

Սրբազան Յայրը Շարակնոցին մէջբերելով հետեւեալ աղօթքը՝ «Մեզի օգնութեան փութացիր ով սուրբ Յովհաննես, առաքեալ եւ մարգարէ, եւ կարապետ եւ մկրտիչ Աստուածորդիին, մեզի համար բարեխօսւ Քրիստոսին», անդրադարձաւ Ս. Յովհաննես Մկրտիչի անձին ու առաքելութեան մասին: Յովհաննես Մկրտիչ մարգարեւերու մէծը եղաւ: Ան թելադրեց ժողովուրդը արդարութեամբ ապրելու: Իր խստակեաց կեանքով, բայց հոգիի ազնութեամբ օրինակ դարձաւ ժողովուրդին: Սրբազան Յայրը պատգամեց որ այս ուխտի օրը մեզի առիթ ըլլայ մաքուր եւ արդար կեանք մը ապրելու: Ան յիշեց ինչպէս անցեալին Մշոյ Սուլթան Ս. Կարապետ Եկեղեցին, որ հիմնուած էր Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէ, հասած էր փրկութեան հայ ժողովուրդի դժուար օրերուն, այսօր ալ կը հասնի պայմանաւ որ իւրաքանչիւրս մեր ծառայութեան կեանքին մէջ արդարութեամբ, հեզութեամբ եւ ճշմարտութեամբ ապրինք: Այսօր մեր

հոգիներուն մեջ ծունկի գանք եւ բարեխօսութիւնը խդրենք Ս. Յովհաննես Սկրտիչէն որպեսզի մեր հաւատքը զօրացնէ: Եթէ երբեք մենք արդարութենեն շեղած ենք, արդարութեան ճամբուն մեջ դև մեզ, եթէ երբեք Աստուծոյ պատուիրաններուն համաձայն չենք ապրիր, մեր կեանքերը փոխէ, որպեսզի Աստուածահանոյ կեանք մը ապրինք: Մեր զաւակներուն դաստիարակութեան նախանձախնդիր ըլլանք, ինչպէս Զաքարիա եւ Եղիսաբէթ աղօթքով, Աստուծոյ ինազանդութեամբ ապրեցան, այնպէս ալ մենք մեր զաւակներով միասին փորձենք իրենց նման ապրիլ:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ մատաղօրինէք եւ բաժնուեցաւ հաւատացեալ ժողովուրդին: Հաւատացեալներ իրենց տուները վերադարձան հոգեւոր ապրումներով լիցքաւորուած:

Պատարագէն անմիջապէս ետք, եկեղեցւոյ »Կարապետեան« սրահին մեջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Սրբազան Յօր, Ներկայութեամբ Յոգեւոր Յովիլին, Ազգային Վարչութեան Ներկայացուցիչներուն, Ոոզ եւ Ալեք Փիլիպոս Ազգային Երկրդ. Վարժարանի տնօրէնին, Մարի Փոստոյեան մանկամտուի վարիչին, շրջանի Յ.Յ.Դ.հ »Գարեգին Նժդեհ« կոմիտէի Ներկայացուցիչին, եկեղեցւոյ Յոգաբարձական կազմին, Տիկնանց Միութեան, ռումանահայ «Րաֆֆի» Մշակութային եւ Յայրենակցական Միութեան վարչութեան եւ անդամներու, քոյր միութիւններու Ներկայացուցիչներուն, Կիրակնօրեայ վարժարանի տնօրէնին եւ ուսուցիչներուն, սարկաւագաց ու դպրաց դասերուն, Երգչախումբի անդամներուն, եկեղեցւոյ բարերարներուն եւ բարեկամներուն, եւ հաւատացեալ բազմութեան:

Ըստանեկան ջերմ մթնոլորտի մեջ, բարի գալուստի խօսք արտասանեց Յոգեւոր Յովիլը՝ Արժ. S. Վիգեն Ալ. Ջին. Վասիլեան: Մեղաններու օրինութիւնը կատարեց Առաջնորդ Սրբազան Յայրը:

Տարիներու բարի աւանդութիւն է, որ եկեղեցւոյ անուանակոչութեան նույնուած այս հանդիսութեան արիթով, Յովիլն ու Յոգաբարձութիւնը պատուեն անձնիր ու վաստակաշատ ծառայողներ: Այս տարի, յատուկ գնահատանքի եւ պատիւի արժանացան ռումանահայ »Րաֆֆի« Մշակութային եւ Յայրենակցական Միութեան անցեալի եւ ներկայի նույնուալները:

Տեր Յայրը միութեան պատմականը ըրաւ ծնունդն՝ 1920-ական թուականներին մինչեւ օրերս՝ 2011:

Յայտագրի ընթացքին խօսք առին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Տոք. Միսաք Պարսամեան եւ «Րաֆֆի» միութեան ատենապետ Տիար Արա Էքիկեան:

Ապա, Տեր Յայրը հրաւիրեց հոգաբարձութեան ատենապետն ու ատենադպիրը «Րաֆֆի» միութեան ատենապետին յանձնելու յուշատախտակ մը, որ կը գնահատեր միութեան անցեալի եւ ներկայի բոլոր անձնուեր անդամներու ու անոնց ծափահարելի աշխատանքը:

Պաշտօնական յայտագիրին կողքին, իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը՝ Ոոզ եւ Ալեք Փիլիպոս Ազգային Վարժարանի եւ Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտ-աշակերտուիհներու կողմէ

Յայտագրի աւարտին, Տեր Յայրը հրաւիրեց Առաջնորդ Սրբազնը, որ միութեան շնորհեց Օրինութեան Գիր մը: Սրբազն Յայրը գնահատեց միութեան բոլոր անդամները, իրենց կատարած ազգանուեր, հայրենանուեր, Եկեղեցանուեր եւ Աստուածահանոյ գործունեութեան համար:

«Պահպանիչ» աղօթքի օրինութեամբ եւ «Կիլիկիա» մաղթերգի Երգեցողութեամբ վերջ գտաւ օրուան խանդավառ հանդիսութիւնը:

NAME DAY CELEBRATION OF ST. GARABED CHURCH OF HOLLYWOOD

Saturday, January 15th, 2011, was the Feast of St. John the Baptist, which is also the name day of St. Garabed Church of Hollywood.

On this occasion, on Sunday, January 16th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Garabed Church. Parish Pastor Archpriest Fr. Vicken Vassilian assisted at the altar.

During the service, the Prelate also bestowed upon altar server Kevork Tahmizian the privilege of bearing a stole. During the ceremony he commended Kevork for his service, and noting that H.H. Catholicos Aram I has proclaimed this year to be the "Year of the Armenian Child", urged parents to encourage their children to attend and serve our church.

The Prelate centered his sermon on the life and virtues of St. John the Baptist. Speaking on his piety, faith, and humility, he called on the faithful to let this be a day of spiritual renewal and to live their lives in the example of St. John. He urged them to call upon St. John as their intercessor, praying that he strengthen their faith, and guide them to the path of righteousness and to a God-pleasing life.

The blessing of *madagh* took place after the service, followed by a luncheon at "Karapetian" Hall organized by the Parish Pastor and Board of Trustees.

The luncheon began with welcoming remarks delivered by Archpriest Fr. Vicken Vassilian, followed by the invocation by the Prelate.

Each year during this annual luncheon, individuals are recognized and honored for their service to the church and community. This year's honoree was the Raffi Cultural Association.

Rev. Fr. Vicken gave a brief history of the Association, from its establishment in the 1920's to the present day. He commended the organization and its members who, for ninety years have contributed greatly to the advancement of our schools, churches, and community.

Remarks were also delivered by Board of Trustees Chair Dr. Misak Barsamian, and Raffi Cultural Association Chair Mr. Ara Ekigian, who expressed thanks on behalf of the organization for the honor.

Rev. Fr. Vicken then invited the Chair and Secretary of the Board of Trustees to join him in presenting Mr. Ekigian with a plaque of appreciation and commendation.

The luncheon also included a cultural program presented by Sunday School students and Rose and Alex Pilibos High School students.

The Prelate was then invited to deliver his message. H.E. conveyed his blessings and commendations to the members of the Raffi Cultural Association for their dedication to advancing our community, and presented them with a letter of blessing.

The luncheon came to a close with the benediction by the Prelate, and the singing of the Cilician anthem.